Նկար 15. Բազմաֆունկցիոնալ ԳՏՀ (GPS) սարք (Montana680t:Garmin)

Ազդանշանները լույսի արագությամբ փոխանցվում են մինչև երկրին հասնելը (փոքր-ինչ ավելի դանդաղ՝ մթնոլորտի միջով): Ընդունիչն՝ օգտագործելով հաղորդագրության ստացման ժամանակը, հաշվում է իր հեռավորությունը յուրաքանչյուր արբանյակից, որից ստացված տվյալների հիման վրա որոշում է դիրքը:

ԳՏՀ կազմված է երեք հիմնական սեգմենտներից՝ տարածքային սեգմենտ, կառավարման սեգմենտ և օգտագործողի սեգմենտ (Նկար 16):



Նկար 16. Գլոբալ Տեղորոշման Համակարգի սեգմենտներ

ԳՏՀ ընդունիչն իր դիրքը որոշելու համար օգտագործում է իր ժամանակը, արբանյակի դիրքը ու ստացված ազդանշանի տեղ հասնելու տևողությունը, ինչն էլ նշանակում է, որ դիրքի ճշտությունը հիմնականում կախված է արբանյակի դիրքի և ազդանշանի ուշացման հետ: Ուշացումը չափելու համար, ընդունիչը համեմատում է ստացված ազդանշանը իր ներքին գեներացված տարբերակի հետ, որի արդյունքում ժամանակակից ընդունիչները կարող են ապահովել մինչև 10 նանովայրկյան ճշտություն: Քանզի ԳՏՀ ազդանշանները տարածվում են լույսի արագությամբ, անճշտությունը կարող է կազմել մինչև 3 մետր:

Գոյություն ունեն բազմաթիվ ԳՏՀ ընդունիչների տեսակներ, որոնց միջոցով հնարավոր է դաշտային պայմաններում հավաքագրել տեղորոշմանը վերաբերվող տվյալներ՝ հիմնականում X Y կոորդինատներ, Z բարձրություն, հեռավորություն, տարածքի չափագրում, և ժամանակ: Տեղում ստացված տվյալները հնարավոր է


մուտքագրել և պահպանել թվային տեսքով՝ ընդունիչի հիշողության մեջ, կամ գրանցել թղթային կամ էլեկտրոնային ձևաչափերում, հետագայում ԱՏՀ օգտագործելու նպատակով:

Ա-ԳՏՀ (A-GPS (Assisted GPS)) դա այն տեխնոլոգիան է, որն օգտագործում է ԳՏՀ ազդանշանների հետ մեկտեղ, նաև համացանցը և բջջային բազային կայանների ազդանշանները: Այս տեխնոլոգիան մեծ մասամբ կիրառվում է բջջային հեռախոսներում (սմարթֆոններ):

Նոր սերնդի բոլոր բջջային հեռախոսները հագեցված են Ա-ԳՏՀ տեխնոլոգիաներով, և դաշտային պայմաններում բջջային ցանցի և ինտերնետի առկայության դեպքում կարելի է մուտքագրել և պահպանել տեղայնքի կոորդինատները:


Բոլոր սմարթֆոններում առկա է Google Maps հավելվածը, բայց օգտատերը կարող է ներբեռնել նաև այլ հավելվածներ, որոնք թույլ կտան պահպանել և փոխանցել դաշտային հետազոտությունների ժամանակ ստացված տեղորոշման տվյալները:

Շատ հաճախ, դաշտային հետազոտական աշխատանքներից առաջ կամ հետո (երբեմն նաև ընթացքում), անհրաժեշտ է լինում համակարգչի օգնությամբ ճշտել տարածքի նկարագիրը, համացանցում առկա արբանյակային և այլ տեսակի քարտեզների օգնությամբ: Անհրաժեշտության դեպքում հնարավոր է հետազոտված կետերի կոորդինատները վիզուալիզացնել, պահպանել պատկերները և տպել (Նկար 17):




Նկար 17. «BaseCamp» համակարգչային ծրագիր, հափուկ Garmin ԳՏՀ սարքի համար

Համացանցում կան բաց կոդավորումով հավելվածներ օժտված ԱՏՀ գործիքներով, որոնցով կարելի է աշխատել առցանց կամ ներբեռնելով ծրագրերը համակարգիչ (Նկար 18):



Նկար 18. «Google Earth» և «Google Maps» հավելվածներ

Ժամանակակից բջջային հեռախոսների միջոցով կարելի է ներբեռնել նաև նեղ մասնագիտացված տարբեր հավելվածներ, որոնց միջոցով դաշտային պայմաններում հավաքագրվում են տվյալներ, բնական օջախային տարբեր վարակների կրողների և փոխանցողների վերաբերյալ՝ հետազայում դրանք օգտագործելով աշխարհագրական տեղեկատվական համակարգերում (Նկար 19):



Նկար 19. Բջջային հավելվածներ ԱՏՀ ոլորտի համար


ԳԼՈՒԽ 5. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԱՏՀ-ն կարևոր դեր է խաղում առողջապահական կազմակերպությունների համար և դրա արտադրանքը, որպես տարբեր տեսակի տարածական վերլուծությունների արդյունքներ և քարտեզներ, բարելավում են հաղորդակցվելու ունակությունը և օգնում ճիշտ որոշումներ կայացնելու գործում:

Համաճարակաբանական տեղեկատվության գնահատման ավանդական մեթոդները աշխատատար են և բարդ: Վերջին տասնամյակների ընթացքում համաճարակաբանական վերլուծության մեջ կիրառվում են տեղեկատվության մշակման նոր մեթոդներ, որոնք մեծացնում են դրանց ճշգրտությունն ու հստակությունը (Նկար 20):


Կիրառական (դաշտային) համաճարակաբանության ոլորտում ներկայումս անհրաժեշտ և նպատակահարմար է օգտագործել ժամանակակից աշխարհագրական տեղեկատվական համակարգեր: Որպես նոր թվային տեխնոլոգիաներ, ժամանակակից ԱՏՀ կիրառումը համաճարակաբանության մեջ, ապահովում է համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրման, պահպանման, մշակման և վերլուծության

համապարփակ ավտոմատացումը և անհրաժեշտ տեղեկատվության պատկերումը թվայնացված քարտեզներում:




Նկար 20. ԱՏՀ և հանրային առողջապահության ոլորտը ներկայացնող գրականություն

Անգլիացի բժիշկ Ջոն Սնոուն համարվում է հիվանդությունների քարտեզագրման առաջամարտիկ: Լոնդոնի համաճարակաբանական ընկերության նիստում 1854 թվականին նա ներկայացրեց խոլերայի բռնկման քարտեզներ (Նկար 21): Քարտեզի վրա նշված էին եղել խոլերայից մահացածների թիվն ըստ հասցեների և ջրի պոմպերի տեղակայման վայրերը: Հիմնվելով վիճակագրության և տարածական բաշխվածության տվյալների վրա, Ջոն Սնոուն կարողացավ ապացուցել կապը ջրամատակարարման և հիվանդության միջև:



Նկար 21. Անգլիայի և Լոնդոնի քարտեզները, որտեղ պատկերված է խոլերայի բռնկումների տարածվածությունը

Ժամանակակից ԱՏՀ գործիքների շնորհիվ թվայնացվել են խոլերայից մահվան դեպքերին վերաբերող Ջոն Սնոուի կողմից հավաքագրված տվյալները և կատարվել է տարածական վերլուծություն (Նկար 22):




Նկար 22. 1854 թվականին Լոնդոնում խոլերայի բռնկման տվյալների տարածական վերլուծությունը ժամանակակից ԱՏՀ միջոցով

Թվային տեխնոլոգիաների և ԱՏՀ ծրագրային ապահովման վերջին նվաճումները հնարավորություն են ընձեռել փոխգործակցություն իրականացնել մեծ տարածական տվյալների շտեմարանների հետ և գրեթե ակնթարթային ստանալ արդյունքներ:


Որպես օրինակ կարելի է ներկայացնել Բելգիական ԱՎԻԱ-ԳԻՍ (Avia-GIS) ընկերությունը, որը մասնագիտանում է հանրային առողջապահությանը և կենդանիների առողջությանը վերաբերող տարածական քարտեզագրման և ռիսկերի մոդելավորման մեջ՝ տարածքի հետ կապված որոշումների աջակցության համակարգերի մշակման համար: Avia-GIS-ը կենտրոնացած է ժամանակակից մեթոդների մշակման վրա, որոնք ընդլայնում են պայմանական վերլուծության շրջանակը, վերափոխում են տվյալները նոր գաղափարների և կամրջում են բացը հետազոտության և որոշումների կայացման միջև, այդ թվում՝ իրականացնելով մաթեմատիկական և տարածական մոդելավորում և շրջակա միջավայրի մշտադիտարկում (Նկար 23):

Ի լրումն տվյալների վերլուծության դինամիկ կամ ինտերակտիվ մոտեցմանը՝ ժամանակակից ԱՏՀ-ի տեխնոլոգիաները թույլ են տալիս կառուցվածքն ուսումնասիրելու համար գրաֆիկական միջավայրում, օգտվողին փոխազդել տվյալների վրա, թույլ է տալիս ուղղակի մանիպուլյացիաներ՝ տվյալների կետերի ակնթարթային ընտրության, ջնջելու, ռոտացիայի և այլ վերափոխումների տեսքով:

Հավաքագրելով և միավորելով մեկ տվյալների շտեմարանում՝ կլիմային, միջավայրին, փոխանցողին, կրողին և հարուցչին վերաբերվող տեղեկատվությունները, և այն կիրառելով աշխարհագրական տեղեկատվական համակարգերում, կստանանք հնարավորություն կատարել տարածական և վիճակագրական վերլուծություն, մոդելավորում և քարտեզագրում (Նկար 24):



Նկար 23. Avia-GIS-ում կիրառվող ԱՏՀ բաղադրիչներ




Նկար 24. Դաշտային հետազոտության արդյունքում ստացված տվյալների ինտեգրացման օրինակ

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲՆԱԿԱՆ ՕՋԱԽԱՅԻՆ ԶՈՈՆՈՋ ԵՎ ՏԱՐԱՓՈԽԻԿ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԷՊԻԶՈՈՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՆ ՀՎԿԱԿ-ի կողմից կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում առկա բնական օջախային վարակների տարածագոտիների թվայնացում, հարուցիչների կրողների, փոխանցողների տարածական տվյալների ամբողջական էլեկտրոնային շտեմարանների ստեղծում, տարածական, վիճակագրական վերլուծություններ, մոդելավորում և թվայնացված տվյալներով քարտեզների պատրաստում (Նկար 25):


Կենդանաբանները, էկոտոմակարածաբանները և միջատաբանները ժամանակակից ԱՏՀ-ում գոյություն ունեցող գործիքներից ունեն լայն ընտրություն, որոնք հարմարեցված են ամփոփելու դաշտային և լաբորատոր հետազոտությունների վերլուծության արդյունքները և ընթացակարգերը, հատկապես էլեկտրոնային քարտեզների վրա վերլուծության և մոդելավորման արդյունքները պատկերելու տեսանկյունից:



Նկար 25. Լեպտոսպիրոզի բնական օջախային տարածքների և Լեյշմանիոզով հիվանդացության դեպքերի տարածական և վիճակագրական վերլուծության արդյունքները պատկերող քարտեզներ

ԱՏՀ-ում և այլ ժամանակակից թվային տեխնոլոգիաներում լայնորեն կիրառվում են տեսակների տարածվածության մոդելավորումը (Species Distribution Modeling), որը հնարավորություն է տալիս հաստատել բնության մեջ տեսակների գտնվելու վայրի և

շրջակա միջավայրի գործոնների միջև կապը (Նկար 26): Բնական օջախային վարակների հարուցիչների, կրողների և փոխանցողների տարածական բաշխման օրինաչափություններն ուսումնասիրելիս, առաջնային խնդիրն է հստակեցնել օջախների և կենդանի օրգանիզմների տարածագոտիների սահմանները:



Նկար 26. Տեսակների տարածվածությունը (Specie Distribution Modeling) «Random Forest» մոդելավորման եղանակով *Culex pipiens* տեսակի մոծակների և *Microtus arvalis* տեսակի կրծողների տարածվածությունը ըստ կլիմայի փոփոխման «MaxEnt» մոդելավորման եղանակով

Վարակի ռիսկի նվազեցմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ պլանավորելիս՝ բնական օջախների տարածական սահմանների իմացությունը թույլ է տալիս ավելի լավ որակ ապահովել տվյալների տարածական վերլուծության մեջ: Տեսակների տարածվածության մոդելները մոդելների լայն դաս են, որոնք հնարավորություն են տալիս կապ համադրել տարածության մեջ գտնվող ցանկացած կետում տեսակների հանդիպման փաստի և այդ պահին՝ շրջակա միջավայրի պայմանների միջև:

Հիմնվելով տեսակների էկոլոգիային առնչվող տվյալների վրա՝ մոդելավորման այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ճշգրտության բարձր աստիճանով կանխատեսել և քարտեզագրել կենսաբանական օբյեկտների բաշխմանը վերաբերվող տարածքները: Հատկապես մեծ պահանջարկ ունեն ապագայում որոշակի տեսակների հավանական տարածվածության կանխատեսման մոդելավորումները՝ համաձայն կլիմայի փոփոխության որոշակի սցենարների:


Հայաստանի Հանրապետության բնական օջախների տարածքի էլեկտրոնային տվյալների շտեմարանը (այսուհետ՝ տվյալների շտեմարան) տեղեկատվական և

տեղեկատու համալիր է՝ ստեղծված ժամանակակից աշխարհագրական տեղեկատվական համակարգի (Esri_ArcGIS) միջոցով: Տվյալների շտեմարանի հիմքում ընկած են օջախային տարածքներում գրանցված և կոորդինատային համակարգին ամրակցված ֆորմալ միավորները՝ «սեկտոր» անվանմամբ, որի մեկ միավորի մակերեսը կազմում է 10 հազար հեկտար (10x10կմ) տարածք: Բոլոր «սեկտոր»-ների տեղաբաշխումը համընկնում է աշխարհագրական կոորդինատային համակարգի WGS_1984 UTM ZONE 38N գոտու հետ, Հայաստանի Հանրապետությունում ընդունված (2007/2/EC,INSPIRE) գեոդեզիական ստանդարտի համաձայն (Նկար 27):




Նկար 27. ՀՀ տարածքում թվայնացված «Սեկտորների» շտեմարանի վիզուալ պատկերը

Էլեկտրոնային տվյալների շտեմարանում ամեն մի «սեկտոր» ունի իր չկրկնվող ծածկագիրը՝ թվային տարբերակով և անվանումը՝ տեքստային տարբերակով: Համակարգը հնարավորություն է տալիս ներբեռնել «սեկտոր»-ին վերաբերվող արխիվային կամ ներկա էպիգրոտոլոգիական և լաբորատոր հետազոտություններից ստացված տվյալներ, աղյուսակի տեսքով և կատարել հարցում: Տարածքների նման լրացուցիչ խմբավորումը չի խոչընդոտում Հայաստանի Հանրապետության տարածքի ադմինիստրատիվ միավորների հետ աշխատելուն, այլ տալիս է ավելի մանրակրկիտ տարածական և վիճակագրական վերլուծության հնարավորություն (Նկար 28):



Նկար 28. «Սեկտոր»-ի համարակալման և տեղաբաշխման կարգ

Դաշտային էպիգոտոլոգիական հետազոտություններում, որպես տարածքային միավոր կիրառվում են «սեկտոր»-ներ, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում կազմում են թվով 367 «սեկտոր»: Գոյություն ունեն հետազոտության համար ամրագրված «սեկտոր»-ների բաշխվածություն ըստ մասնաճյուղերի (Նկար 29):



Նկար 29. ՀՎԿԱԿ-ի «Բնական օջախային վարակների էպիգոտոլոգիայի» լաբորատորիայի, «Շիրակ», «Սյունիք» և «Գեղարքունիք» մասնաճյուղերի կողմից սպասարկվող «սեկտոր»-ներ

Որպես ԱՏՀ-ի կիրառման օրինակ ներկայացվում է ժանտախտի բնական օջախները: Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունի ժանտախտի երկու բնական օջախ՝ Անդրկովկասյան բարձր լեռնային և Մերձարաքսյան ցածր լեռնային (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Տեղեկատվություն ՀՀ տարածքում ժանտախտի բնական օջախների վերաբերյալ

Օջախի տեսակ	Օջախի ծածկագիր	Օջախի անվանում	Օջախի ընդհանուր մակերեսը (կմ ²)	Օջախի ընդհանուր մակերեսը ՀՀ տարածքում (կմ ²)
Դաշտամկնային	4, 5, 6	Անդրկովկասյան բարձր լեռնային	26430	22300
Ավազամկնային	7	Մերձարաքսյան ցածր լեռնային	9780	5500
Ընդամենը			36210	27800


Անդրկովկասյան բարձր լեռնային բնական օջախն ունի 26430 կմ² տարածք, որը զբաղեցնում է Անդրկովկասի կենտրոնական, հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան հատվածները (Նկար 30):



Նկար 30. Անդրկովկասյան բարձր լեռնային ժանտախտի բնական օջախի քարտեզ-սխեմա

Օջախի սահմաններն անցնում են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք Ջավախքի, Սոմխետի, Արեգունիի, Սևանի լեռնաշղթաներով և Ղարաբաղյան բարձրավանդակով: Հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևմուտք օջախի սահմաններն անցնում են Եղնախաղի լեռներից, Աշոցքի բարձրավանդակով, Շիրակի հարթավայրով, Արարատյան դաշտի բարձրադիր շրջաններով և Ջանգեզուրի լեռնաշղթայի երկայնքով: Հայաստանի Հանրապետության տարածքում Անդրկովկասյան բարձր լեռնային օջախը բաղկացած է «Գյումրիի», «Մերձսևանյան» և «Ջանգեզուրյան» մեգաօջախներից և դրանց ընդհանուր տարածքը հանրապետությունում զբաղեցնում է 22300 կմ² մակերես:

«Մերձարաքսյան» ցածր լեռնային բնական օջախը, գտնվում է Արաքս գետի ձախափնյա հարակից կիսաանապատային և նախալեռնային գոտիներում՝ ընդգրկելով Հայաստանի Հանրապետության և Նախիջևանի տարածքները (նկար 31): Մերձարաքսյան ցածր լեռնային բնական օջախի ընդհանուր մակերեսը կազմում է 9780 կմ², որից ՀՀ տարածքում գտնվում է օջախի 5500 կմ² մակերեսը:



Նկար 31. Մերձարաքսյան ժանտախտի բնական օջախի քարտեզ-սխեմա

Հայաստանի Հանրապետության տարածքի Անդրկովկասյան բարձր լեռնային բնական օջախում առկա է 250 «սեկտոր», իսկ «Մերձարաքսյան» բնական օջախում՝ 72 «սեկտոր»:

Բնական օջախային տարածքներից ստացված տեղեկատվական հոսքերը, ներառում են տարածքի մշտադիտարկման և դաշտային էպիգոտոլոգիական հետազոտությունների իրականացման ընթացքում, կամ ավելի վաղ կուտակված տեղեկատվության ընտրություն և նախապատրաստում՝ տվյալների շտեմարան ներբեռնելու համար: Աշխարհագրական տեղեկատվական համակարգում բոլոր ստացված տվյալները ներբեռնելու համար պարտադիր պայման է՝ դաշտային պայմաններում կիրառել գլոբալ տեղորոշման համակարգ (GPS), որից ստացված տեղեկատվությունը ապահովում է տեղանքի և դրա հետ կապված տվյալների ճշգրիտ աշխարհագրական կոորդինատները: Այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է տվյալների շտեմարանի թարմացման, կամ նոր տվյալների ներբեռնման համար, անհրաժեշտ է ներկայացնել Microsoft Excel ծրագրում ստեղծված աղյուսակների ձևով, որոնք հետագայում կդառնան ԱՏՀ-ում կիրառվող տվյալների շտեմարանի հիմք (Նկար 32):

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N
	Ամիս ամսաթիվ	Կետի հեղթական համարը	Դրսիսային լայնություն	Արևելյան երկայություն	Բարձրությունը ծովի մակարդակից	"Սեկտորի" ծածկագիր	Մարզ	Ստանկա բնակավայր	Նմուշառվել է կողմ (ընդամենը)	Տեսակ	Ձանակ	Նմուշառվել է լու (ընդամենը)	Տեսակ	Ձանակ
1														
2														
3														

	O	P	Q	R	S	T	U	V	W	X	Y	Z	AA
	Նմուշառվել է տեղ (ընդամենը)	Տեսակ	Ձանակ	Գլխավոր կրողի խտությունը "Սեկտորում"	Տեսակ	Գլխավոր կրողի խտությունը "Սեկտորում"	Տեսակ	Ընդհանուր չվերի խտությունը "Սեկտորում"	Անջատվել է հարցվել (այո-1, ոչ-0)	Հազուցվել անվանումը	Կրողի տեսակ	Փոխանցողի տեսակ	Ապրիլի հետազոտման եղանակ (մակերեսային-1, շեղանակ-2, "ՊՇՆ-Յ")
1													
2													
3													

Նկար 32. Microsoft Excel տարբերակով լրացման ենթակա աղյուսակի օրինակ

Վեկտորային ձևաչափով ստեղծված տվյալների շտեմարանը հնարավորություն է տալիս աշխատել տարբեր թվայնացված քարտեզագրական աղբյուրների և այլ նմանատիպ շտեմարանների հետ՝ կատարելով տարատեսակ վերլուծություններ: Շտեմարանը հանդիսանում է ստացված տվյալների շարունակական ներբեռնման գործընթացի մի թվային միջավայր, որը տարիների ընթացքում դառնում է էլ ավելի արժեքավոր տեղեկատվական աղբյուր:

Աշխարհագրական տվյալները (Geodata) սովորական տվյալներից տարբերվում են աշխարհագրական դիրքը որոշող կոորդինատների առկայությամբ (Նկար 33):


Հյուսիսային լայնություն Latitude Y	Արևելյան երկայնություն Longitude X	Տվյալներ	Տվյալներ
40.177651	44.512623	Թիվ	Տեքստ

Նկար 33. Տվյալների շտեմարանում պարզադիր լրացվում են կոորդինատները

ԱՏՀ մուտքագրվող տեղեկատվությունը պետք է շատ հստակ կապված լինի որոշակի տարածքի կամ կետի աշխարհագրական կոորդինատային համակարգի հետ: Տվյալները համարվում են ԱՏՀ-ի հիմքը, որոնք մուտքագրվում են օպերատորի կողմից և պահպանվում են տվյալների թվային շտեմարաններում հետագա վերլուծության համար:

Տվյալների վերլուծությունը կատարվում է «հարցման» միջոցով (կառուցվածքային հարցման լեզու (SQL (structured query language)), օգտագործվում է որպես կապ տվյալների շտեմարանի հետ, որի միջոցով օպերատորն ուղարկում է ԱՏՀ ծրագրին որոշակի տվյալներ փնտրելու և արտացոլելու համար (Նկար 34): Օրինակ.

- 1) Տարածք, որտեղ հայտնաբերվել է էպիզոոտիա,
- 2) Բնակավայր կամ տուն, որը մոտ է էպիզոոտիկ տարածքին,
- 3) Ռիսկի հավանականություն ունեցող տարածքներ:



Նկար 34. ԱՏՀ միջոցով կարող է կատարվել հարցում «սեկտոր»-ի տվյալների վերաբերյալ

Հանրային առողջապահական նշանակության երևույթների վերլուծության համար կիրառվում են *տվյալների հետևյալ տեսակներ*.


- 1) Համաճարակաբանական տվյալներ,
- 2) Լաբորատոր հետազոտություններից ստացված տվյալներ,
- 3) Հարուցչի կրողների և փոխանցողների վերաբերյալ տվյալներ,
- 4) Սոցիալ-տնտեսական տվյալներ,
- 5) Արխիվային տվյալներ:

Քարտեզագրման համար կիրառվում են նաև *աշխարհագրական տվյալներ՝* քարտեզներ, արբանյակային պատկերներ, լանդշաֆտային, բնապահպանական տվյալներ, կլիմային վերաբերող տվյալներ, օրինակ՝ ջերմաստիճան և տեղումներ, ինչպես նաև համացանցում գոյություն ունեցող *տարածական տվյալների աղբյուրներ՝* (https://en.wikipedia.org/wiki/List_of_GIS_data_sources).

- 1) Համացանցում զետեղված տվյալների շտեմարաններ,
- 2) Փոխանակման կամ գնման միջոցով ստացված տվյալներ,
- 3) Օգտագործողի կողմից հավաքագրված տվյալներ (GPS, Geocoding),
- 4) Թվային աշխարհագրական քարտեզներ:

Եթե մենք մեր առջև խնդիր ենք դնում ուսումնասիրելու օրինակ՝ տուլարեմիայի էպիդոտիան՝ որպես բնության տարածա-ժամանակային երևույթ և սկսում ենք այդ կապակցությամբ օգտագործել ԱՏՀ, ապա դրա հնարավորությունները շատ ավելի մեծ են դառնում: Սա այլևս պարզապես տվյալների ինքնանպատակ մշակում չէ, այլ սկսվում է տեղեկատվության ակտիվ ընտրություն՝ տուլարեմիան, որպես բնական երևույթ բացատրելու վրա: ԱՏՀ տեխնոլոգիայի հնարավորությունները բացահայտվում են միայն հետազոտողի հստակ արտահայտված ճանաչողական հետաքրքրությամբ:

Դաշտային էպիդոտոլոգիական տվյալները ԱՏՀ-ում կարող է պարունակել վարակի աղբյուրի տարածա-ժամանակային դիրքի, կրողների և փոխանցողների տեսակային կազմի և նրանց շրջանում վարակի տարածման հնարավոր ուղղության մասին նվազագույն տեղեկատվություն (Նկար 35):



Նկար 35. Տուլարեմիայի շտեմարանի վեկտորային տարբերակը, որտեղ արտացոլվում է կետին վերաբերվող բոլոր տվյալները

Իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ստեղծվել է ԱՏՀ-ի տվյալների թվային շտեմարան (Նկար 36), որտեղ ներառվել են Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրված տուլարեմիայի էպիզոտիաները և լաբորատոր արդյունքները, սկսած նախորդ դարի կեսերից մինչ օրս: Տվյալների շտեմարանում մուտքագրված են բոլոր կետերի աշխարհագրական կոորդինատները և յուրաքանչյուր կետին առնչվող դաշտային և լաբորատոր տվյալներ:


ԱՏՀ-ի կիրառումը թույլ է տալիս ավելի ամբողջական ուսումնասիրել էպիզոտիկ գործընթացը և աշխարհագրական օրինաչափությունները, հատկապես բնական օջախային հիվանդությունների կրողների ու փոխանցողների էկոլոգիային վերաբերվող տվյալները և բարելավել էպիզոտոլոգիական վերլուծության մեթոդաբանությունը, ինչպես հետահայաց, երկարաժամկետ, այնպես էլ կարճ ժամանակահատվածի համար (Նկար 37):

Էպիզոտոլոգիական ռիսկն իրական սպառնալիք է, և ռիսկի վրա հիմնված մշտադիտարկման համակարգը պետք է ուղղված լինի առաջին հերթին էպիզոտիկ բարեկեցության և կենսաբանական անվտանգության ապահովմանը:

ID	Y	X	Rodents	Ticks	Fleas	Date	Number_ of_ isolated_ cultures	Landscape_zones	Elevation
1	39,720	45,923			<i>Ct.wladimiri</i>	16.06.2016	1	High mountain subalpine	2671
2	39,705	45,835		Ixodidae		18.06.2016	5	High mountain meadow steppe	2229
3	39,739	45,844			<i>C.caspia</i>	19.06.2016	2	High mountain subalpine	2643
4	39,688	45,769	<i>M.arvalis</i>		<i>Ct.wladimiri</i>	16.06.2016	2	High mountain meadow steppe	2106
5	39,547	45,845	<i>M.arvalis</i>			15.07.2016	6	High mountain meadow steppe	2089
6	39,526	46,224			<i>Ct.wladimiri</i>	24.07.2016	1	High mountain subalpine	2666
7	39,705	45,835	<i>M.arvalis</i>			13.08.2016	1	High mountain meadow steppe	2109
8	40,724	43,895	<i>M.arvalis</i>			22.08.2016	2	Low mountain dry steppe	1536
9	40,686	43,932	<i>M.arvalis</i>			22.08.2016	1	Middle mountain steppe	1640
10	40,484	43,841	<i>M.arvalis</i>			14.09.2016	2	Middle mountain steppe	1898
11	40,450	43,895	<i>M.arvalis</i>			16.09.2016	1	Middle mountain steppe	1882
12	40,842	43,966	<i>M.arvalis</i>			02.09.2016	1	Middle mountain steppe	1741
13	40,385	45,018	<i>M.arvalis</i>			03.10.2016	1	High mountain meadow steppe	2234
14	40,118	45,143		Gamasoidea		09.10.2016	1	High mountain subalpine	2431
15	40,350	43,609	<i>M.arvalis</i>			09.06.2016	2	Low mountain dry steppe	1305
16	40,481	43,865	<i>M.arvalis</i>			18.06.2016	7	Middle mountain steppe	1979
17	40,437	43,728	<i>M.arvalis</i>			22.06.2016	4	Low mountain dry steppe	1534
18	40,427	43,729	<i>M.arvalis</i>			23.06.2016	1	Low mountain dry steppe	1525
19	40,405	44,792			<i>Ct.teres</i>	27.06.2016	1	High mountain meadow steppe	2133

Նկար 36. Տուլարեմիայի արձանագրված էպիզոտիկաների տվյալների թվային շտեմարանի մի հատված

Միջոցառումների մշակումը պետք է իրականացվի յուրաքանչյուր նոգողոգիական միավորի համար՝ համաձայն հարուցչի կենսաբանական, էպիզոտիկ և համաճարակաբանական գործընթացի բնութագրերի գիտականորեն հիմնավորված տվյալների:



Նկար 37. Տուլարեմիայի արձանագրված էպիզոոտիաների տարածական վերլուծություն

Ռիսկերի գնահատման վրա հիմնված արդյունավետ մշտադիտարկման համար անհրաժեշտ է կենտրոնացնել տեղեկատվական հոսքերը և իրական ժամանակում փոխանակել գործառնական տվյալները և համակարգել գործողությունները բոլոր մասնաճյուղերի միջև էպիզոոտիաների բացասական հետևանքները նվազեցնելու կամ կանխելու համար՝ հաշվի առնելով ռիսկերի գնահատման և կառավարման ժամանակակից մեթոդները: Կարևոր ասպեկտ է էպիզոոտոլոգիական և համաճարակաբանական մասնագիտացված տվյալների շտեմարանների ստեղծումը՝ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրմամբ:


Բնական օջախային զոոնոզ և տարափոխիկ վարակների համաճարակաբանության մեջ էպիզոոտոլոգիական հետազոտությունների դերն ու նշանակությունը շատ մեծ կարևորություն ունի: Հայաստանի Հանրապետությունում բնական օջախային վարակների տարբեր հատվածներում, այլ հարուցիչների հայտնաբերումը վկայում է համակցված բնական օջախների առկայության մասին:

Վերջին տարիներին խիստ արդիական են դարձել բնության մեջ տարբեր տեսակի կրողների և փոխանցողների շրջանում բակտերիալ, վիրուսային, ռիկետսիոզ և այլ

էթիոլոգիայի հարուցիչների մշտադիտարկումը դաշտային և լաբորատոր պայմաններում, ինչպես նաև աճել է համակցված վարակների էնզոոտիկ տարածքներում հետազոտությունների ինտեգրված մոտեցման «Մեկ առողջություն» գաղափարի ներդրման տեմպերը: Այս մոտեցման հիմնական գաղափարը և անհրաժեշտ պայմանը մեր պարագայում, բնական օջախային վարակների տարածքներում էպիզոոտոլոգիական մշտադիտարկումն է, և համակցված վարակների հարուցիչների որոնումն ու հայտնաբերումը:

Մի շարք գործոններ, ինչպիսիք են շրջակա միջավայրը և կլիմայի փոփոխությունը, մեծացնում են մարդ-կենդանի-միջավայր շրջանակում առաջացող սպառնալիքների ռիսկը, ինչպիսիք են զոոնոզ և տարափոխիկ հիվանդությունները: Նոր առաջացող վարակիչ հիվանդությունները, որոնք նոր են հայտնաբերվում բնության մեջ կամ բնակչության շրջանում, կամ եղել են նախկինում, վարակների գլոբալ տարածվածության ներկա փուլում հիմնված է ընդհանուր բնույթի օբյեկտիվ տարածքային և աշխարհագրական նախադրյալների, կլիմայական պայմանների, էկոլոգիական և սոցիալ-տնտեսական գործոնների վրա:

Էպիզոոտոլոգիական հետազոտություններում կիրառելով «Աշխարհագրական Տեղեկատվական Համակարգ», ՀՎԿԱԿ-ի «Շիրակ», «Գեղարքունիք» և «Սյունիք» մասնաճյուղերի կողմից ստացված տեղեկատվությունը կվերլուծվի ավելի արագ և արդյունավետ, կկանոնակարգվեն և կբարելավվեն մասնաճյուղերի և «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի «Բնական օջախային վարակների էպիզոոտոլոգիայի» լաբորատորիայի և կենտրոնական ապարատի միջև տեղեկատվության հոսքը և որակը, ապահովելով ժամանակակից թվային տեխնոլոգիաների անցման գործընթացը, ինչպես նաև արդիականացնելով բնական օջախային հիվանդությունների մշտադիտարկման և լաբորատոր հետազոտությունների ընթացքում ստացված տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության մեթոդները:



Նկար 38. Տեղեկատվական հոսքերի կառավարման սխեմա

Տարվա ընթացքում ստացված ցուցանիշների և հետազոտությունների արդյունքները արտացոլվում են համաճարակաբանական և կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ հաստատված ամսական և տարեկան գործառնական վերլուծություններում և հաշվետվություններում: Օրացույցային տարվա ընթացքում սպասարկվող տարածքի էպիզոոտիկ հետազոտության արդյունքների հիման վրա կազմված հիմնական փաստաթղթերից մեկը, որը կազմվում է մասնաճյուղերում պատասխանատու էպիզոոտոլոգի կողմից՝ դա բնական օջախային տարածքի էպիզոոտիկ վիճակի ամփոփ վերլուծությունն է:

Ամփոփ վերլուծությունն ու կանխատեսումը անհրաժեշտ է հաջորդ տարվա կանխարգելիչ միջոցառումները պլանավորելիս, ինչպես նաև հանդիսանում է որպես տեղեկատվական շատ կարևոր աղբյուր, բնական օջախային և զոոնոզ վարակների համաճարակաբանության մեջ:

Հեռահար ուսուցման դասընթացների հղումներները ներկայացված են Հավելված 1-ում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1) Desktop GIS Software | Mapping Analytics | ArcGIS Pro. Accessed April 19, 2026. <https://www.esri.com/en-us/arcgis/products/arcgis-pro/overview>
- 2) Esri Training Catalog | Find Courses on GIS and ArcGIS Topics. Accessed April 19, 2026. <https://www.esri.com/training/catalog/search/>
- 3) GIS Software for Mapping and Spatial Analytics | Esri. Accessed April 19, 2026. <https://www.esri.com/en-us/home>
- 4) QGIS Training Manual — QGIS Documentation documentation. Accessed April 19, 2026. https://docs.qgis.org/3.44/en/docs/training_manual/index.html
- 5) Spatial without Compromise · QGIS Web Site. Accessed April 19, 2026. <https://qgis.org/>
- 6) Garmin. Garmin. Accessed April 19, 2026. <https://www.garmin.com/en-US/>

ՑԱՆԿ

հեռահար ուսուցման դասընթացների հղումներներ

- 1) <https://www.esri.com/training/>
- 2) <https://www.coursera.org/specializations/gis>
- 3) <https://www.udemy.com/topic/gis/>
- 4) <https://www.gislounge.com/learn-gis-for-free/>
- 5) <https://www.esri-cis.ru/ru-ru/training/home>

ISBN 978-9939-1-2282-3

